# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԵՑԵԱԼ ՉՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ՎԱՐԿԱԾԻ ՇՈՒՐՋ

ՎՐԷԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Սկսած անցեալ դարի կէսերից, հայագէտների ուշադրութիւնը գրաւել է Թովմա Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց երկի[1] մէջ եղած տեղեկութիւնը Մովսէս Խորենացու, Պատմութիւն Հայոց երկի[2] կարծեցեալ չորրորդ գրքի մասին։ Այդ խնդրին նրանք անդրադարձել են առանձին յօդուածներով, երբեմն էլ անցողակի։ Թւում էր, թէ Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի գոյութեան վարկածը մերժուած է, եւ այն վերարծարծելու հարկ չկայ։ Սակայն վերջերս քննութեան առնուեց Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի աշխատակից Արտաշէս Մաթեւոսեանի կողմից, որը 1995թ. հրատարակեց առանձին ուսումնասիրութիւն՝* Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» *չորրորդ գիրքը խորագրով[3], որտեղ նա փորձում է ոչ միայն հիմնաւորել Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի գոյութիւնը, այլեւ վերականգնել նրա բնագիրը։ Սակայն ինչպէս յայտնի է, պատմահօր հռչակաւոր երկասիրութեան ցարդ յայտնի բոլոր ձեռագիր բնագրերում Պատմութիւնը ներկայացուած է միայն երեք գրքերով, որոնք անխտիր կրում են «Պատմութիւն Հայոց յերիս հատուածս» խորագիրը, ինչը բացառում է չորրորդ գրքի գոյութիւնը։*

*Խորենացու Պատմութեան մեզ հասած հնագոյն ձեռագիր օրինակը ԺԳ.—ԺԴ. դդ. է ընդօրինակուած։ Հնութեամբ յաջորդ ձեռագիրը ստեղծուել է 1671թ., բայց արտագրուել է պատմահօր երկասիրութեան՝ Ներսէս Լամբրոնացու (ԺԲ. դ.) ձեռագիր օրինակից, որը կորած է համարւում։ Դրանցում եւս Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի գոյութեան որեւէ հետք չկայ։*

*Մաթեւոսեանը յենւում է Արծրունու երկում հանդիպող անվաւեր տուեալների վրայ։ Ընդսմին Արծրունու Պատմութեան առաջին գլխուն Ա. գլխում խօսւում է Ասորեստանի թագաւորների՝ Նինոսի, Շամիրամի եւ այլոց մասին եւ նշւում, որ իր պատուիրատուն կարող է նրանց մասին տեղեկութիւններ գտնել Յուլիանոս Հալիկառնասցու չորրորդ*

գրքում, ինչպէս եւ Մովսէսի չորրորդ գրքի մէջ՝։ Ինչպէս յայտնի է, Արծրունու երկի հեղինակային օրինակը մեզ չի հասել։ Նրա միակ ամբողջական եւ հնագոյն ձեռագիրը, որ հանգրուանել է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում 10451 թուահամարի տակ, ընդօրինակուել է 1303 թուականին, Դանիէլ գրչի կողմից։ Նոյնիսկ յայտնի չէ, թէ վերջինս հեղինակայի՞ն, թէ՞ մէկ ուրիշ (դարձեալ մեզ չհասած) օրինակից է կատարել ընդօրինակութիւնը։ Պահպանուած ձեռագիր բնագրում եղած գրչագրական վրիպումները, սխալ գրութիւնները թոյլ են տալիս կարծելու, որ Արծրունու երկի օրինակողը խնդրոյ առարկայ հատուածում եւս վրիպում է թոյլ տուել եւ Յուլիանոս Հալիկառնասցու երկասիրութեան չորրորդ դպրութեան ազդեցութեամբ մեքենայաբար Խորենացուն եւս վերագրել է մի անգոյ չորրորդ գիրք։ Հնարաւոր է, որ Արծրունու գործի հեղինակային բնագրում «չորրորդի» փոխարէն եղել է «առաջին» բառը, քանի որ Խորենացին իր Պատմութեան առաջին գրքում իրօք խօսում է Արծրունու յիշատակած վերոնշեալ անձանց մասին։

Մէկ այլ առիթով Արծրունին գրում է, թէ Խորենացին իր Պատմութեան, «խոստացուած» չորրորդ գրքում, որն աւելացուել է «ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին», խօսել է Սահակ Պարթեւի մասին[5]։ Մաթեւոսեանը գտնում է, որ Արծրունին իր Պատմութեան առաջին դպրութեան նիւթը քաղել է նաեւ Խորենացու Պատմութեան չորրորդ գրքից[6]։ Սակայն Արծրունու երկասիրութեան առաջին դպրութիւնն աւարտւում է Սահակ Պարթեւի մահուամբ, այսինքն նոյն կերպ, ինչպէս որ Խորենացին է աւարտում իր Պատմութեան երրորդ գիրքը։ Եւ եթէ Արծրունու մօտ կան մի քանի մանր մունր տուեալներ, որոնք տեղ չեն գտել Խորենացու մօտ, ապա դա պէտք է բացատրել նրանով, որ Արծրունին ձեռքի տակ ունեցել է նաեւ այլ աղբիւրներ։ Խորենացին իրօք, իր Պատմութեան մէջ գրել է Սահակ Պարթեւի վախճանուելու մասին, բայց ոչ թէ չորրորդ անուանուած գրքում, ինչպէս կարդում ենք Արծրունու մօտ, այլ դրան նուիրել է առանձին գլուխ, այն զետեղելով իր Պատմութեան երրորդ գրքի վերջում, «Ողբ»ից առաջ։ Վերջահար այս գլխում Խորենացին գրում է նաեւ Մաշտոցի վախճանուելու մասին։ Այստեղ հայոց մեծ լուսաւորիչների վախճանը զուգորդւում է հայոց ինքնուրոյն պետականութեան բարձումի հետ։ Արծրունին երբ գրում է, թէ Խորենացու Պատմութեան չորրորդ գրքում գրուել է Սահակի մասին, նկատի ունի միայն նրա «լի եւ պարարտ ծերութեամբ» վախճանուելու փաստը, որը յիշում է նաեւ Կորիւնը Վարք Մաշտոցի երկի մէջ՝։ Նշենք, որ այս մասին պատմող հատուածը Արծրունու մօտ աղճատուած է, խախտուած է նախադասութիւնների ետեւառաջութիւնը, որը թերեւս հետեւանք է այն փաստի, որ գաղափար օրինակը, որից կատարուել է Արծրունու երկի

ընդօրինակութիւնը, եղել է մաշուած վիճակում, որից էլ առաջացել է բնագրի եղծումը։ Ըստ երեւոյթին գրիչը փորձել է վերականգնել այն եւ, ելնելով մէկ անգամ արդէն իր կատարած սխալից, ջնջուած «երկեցունց»ի փոխարէն գրել է «երեցունց», հիմք ունենալով Խորենացու երկասիրութեան չորրորդ գրքի մասին իր կողմից արուած վերոնշեալ սխալը։

Արծրունու այս հատուածում ուշադրութիւն է գրաւում նաեւ մէկ այլ հանգամանք։ Պատմիչը, Սահակ Պարթեւի վախճանուելու մասին Խորենացու եւ Կորիւնի հաղորդումները համարում է համարժէք, գրելով, որ Սահակի վախճանուելու մասին Խորենացու հաղորդածը հաւաստուած է նաեւ Կորիւնի երկում[8]։ Առաբերելով Սահակի վախճանուելու մասին Կորիւնի եւ Խորենացու տուեալները, իրօք, տեսնում ենք պատմահօր Պատմութեան երրորդ գրքի վերջին գլխի եւ Կորիւնի երկի համապատասխան հատուածի բովանդակութեան նոյնութիւնը։ Հետեւաբար, Արծրունին նկատի է ունեցել Խորենացու երկասիրութեան երրորդ գրքի հենց այդ գլուխը։ Եւ երբ Արծրունին գրում է, թէ նշուած գլուխը աւելացուել է Խորենացու երեք գրքերին, նկատի ունի այդ գրքերի վերջում այդ գլխի զետեղուելու պարագան։ Նոյն այդ աղճատուած հատուածում Արծրունին նշում է, որ Խորենացին իր Պատմութիւնը հասցնում է մինչեւ Բիւզանդական Զենոն կայսրը (474–475 թթ.)։ Բայց այստեղ հաւանաբար պատմիչն ի նկատի ունի Խորենացու Պատմութիւնը աւարտելու տարեթիւը, ինչը նշուած է Մաշտոցի անուան Մատենադարանում 2679 թուահամարի տակ պահուող այսպէս կոչուած Սեբի (Եւսեբիոսի) Ժամանակագրութեան մէջ (նաեւ վերջինիս տպագրուած բնագրում)։

Խորենացու Պատմութիւնը հայոց պետականութեան պատմութիւնն է, որի կորստեան առթիւ պատմիչը իր երկն աւարտում է առանձին գլխով, որը նրա հոգու ողբն է՝ ազգային կեցութեան, հայրենիքի դժխեմ ճակատագրի համար։ Այս ողբից յետոյ նշում է՝ «Աւարտեցան գիրք երրորդ, յանկ ելանելոյ պատմութեան Հայոց մեծաց», այսինքն հենց երրորդ գրքով էլ վերջանում է նրա Պատմութիւնը։ Իրօք, պատմահայրը իր երկի երրորդ գիրքը կոչում է «Աւարտաբանութիւն», այսինքն Պատմութեան աւարտը, ուստի անբնական կը լինէր դրանից յետոյ մի չորրորդ գիրք վերագրել նրա երկասիրութեանը։ Ցպէտք է նաեւ անտես անել այն հանգամանքը, որ Խորենացու Պատմութիւնը գրուել է որպէս դասագիրք եւ նպատակ է ունեցել ժողովրդի մէջ կենդանի պահել անկախ պետականութեան գաղափարը։ Ուստի պատմահայրը, թէեւ կենդանի էր Ե. դ. հայերի մղած երկու ազատագրական պատերազմների ժամանակ, սակայն դոյզն իսկ չանդրադարձաւ դրանց, քանզի դուրս էին իր նպատակադրման շրջանակներից։ Պատմութեան չորրորդ գիրք գրելու դէպքում նա կամ պէտք է կրկնէր իրեն, կամ դէմ գնար իր հասարակական–

քաղաքական հաւատամքին։ Որեւէ դրական ապացոյց չունենք, որի վրայ յենուելով կարելի լինէր պնդել, թէ իրօք մատենագիրը դիմել է նման օտարոտի քայլի։

Մաթեւոսեանը եռանդուն ջանքեր է ներդնում ապացուցելու համար Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի գոյութիւնը։ Նա գտնում է, որ ըստ Արծրունու վկայութեան, չորրորդ գիրքը մեզ է հասել առաջին պատմագրութեամբ, որի տակ նկատի ունի Խորենացու երկասիրութեան ցարդ յայտնի երեք գրքերը, եւ երկրորդ պատմագրութեամբ, այսինքն նրանց վրայ աւելացուած չորրորդ գրքով։ Սակայն Արծրունին ընդհակառակը, գրում է, որ Խորենացու Պատմութեան չորրորդ գիրքը «վերադարձութիւն» է, իմա՝ աւելացուել է «ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին»[10] եւ, հետեւաբար, նրա հետ կազմել է մի ամբողջութիւն, նրանից չի առանձնացուել, ուստի եւ Արծրունին այն կոչում է չորրորդ գիրք։ Մաթեւոսեանը կարծում է, որ Խորենացու վերոնշեալ «երկու պատմագրութիւնները» սկսւում են Ադամ նախահօրից, մի էական տարբերութեամբ՝ առաջինի ժամանակագրական եզրը 440 թուականն է, երկրորդինը՝ 474ը։ Եթէ առաջնորդուենք այսօրինակ կանխավարկածով, ապա պէտք է ընդունենք, որ Խորենացին գրել է ոչ թէ մէկ, այլ երկու Պատմութիւն։ Հեղինակը վկայաբերում է նաեւ Պատմութեան մէջ Խորենացու կատարած խոստումները («խոստարանութիւնները»), որոնք սակայն հիմք են տալիս կարծելու, որ պատմահայրը որոշ անձնաւորութիւնների մասին խոստանում է գրել ոչ թէ Պատմութեան, այլ ուրիշ աշխատութեան մէջ, կամ ինչպէս ինքն է նշում, «այլում տեղւոյ եւ ժամանակի զայսոսիկ թողեալ հատցուք աստանօր զբանս...», «վասն երկարութեան առաջիկայ գործոյս»[11]։ Մէկ այլ առիթով, Սահակ Պարթեւի մասին խօսելիս, պատմահայրը գրում է որ Սահակ Պարթեւը հարկ էր որ ըստ արժանւոյն դրուատուէր, բայց որպէսզի իր խօսքը ընթերցողներին չձանձրացնի, նրա մասին եւս խոստանում է գրել «այլում տեղւոյ եւ ժամանակի»։ Պարզ է ասուած՝ «այլ տեղում եւ ուրիշ ժամանակ», այսինքն, ինչպէս ինքը պատմիչն է նշում, «արտաքոյ այսց գրոց»[12], իմա՝ Պատմութիւնից դուրս, ուրիշ աշխատութեան մէջ, որը հնարաւոր է նա գրել է, բայց մեզ չի հասել։ Հասկանալի է, պատմագիրը խոստանում է գրել այն, ինչ չէր նախատեսում անել Պատմութեան մէջ։

Չորրորդ գրքի գոյութեան վարկածը հիմնաւորելու համար Մաթեւոսեանը դիմում է նաեւ ուրիշ սկզբնաղբիւրների։ Մասնաւորապէս նա գտնում է, որ Մաշտոցի անուան Մատենադարանում, 2679 թուահամարի տակ պահուող ձեռագիրը, որը ամփոփում է Անանիա Շիրակացուն վերագրուող ժամանակագրութիւնը եւ 1944թ. հրատարակուել է նրա միւս գործերի հետ[13], իր հիմնական մասով — (որն ընդգրկում է մինչեւ

Զենոն կայսեր ժամանակները՝ 474թ.) — պատկանում է Խորենացու գրչին եւ մտել է նրա Պատմութեան չորրորդ գրքի մէջ[14]։ Բայց այստեղ նա բախւում է այն փաստի հետ, որ նոյն ժամանակագրութեան մէջ դէպքերի շարադրանքը հասցւում է մինչեւ հայոց ՃԼԴ (685) թուականը։ Այս ժամանակագրութիւնը, որ ամենայն հաւանականութեամբ շարադրուել է անանուն մատենագրի կողմից (այն չի կրում Շիրակացու անունը), իր առաջին մասում բանաքաղուած է Խորենացու Պատմութիւնից եւ Դ. դ. յոյն մատենագիր Անդրէասի կողմից խմբագրուած մէկ այլ յոյն գրողի՝ Հիպպոլիտ Բոստրացու ժամանակագրութիւնից, որի յունարէն բնագիրը կորած է համարւում[15]։ Անանուն բանաքաղը օգտուել է նաեւ Եւսեբիոս Կեսարացու, Եպիփան Կիպրացու եւ ուրիշների գործերից՝ իր աշխատութեան առաջին մասը շարադրելիս։ Քանի որ Անանունը բանաքաղել է Խորենացուց, ուստի բնական էր սպասել, որ նա պէտք է կրկնէր նրան։ Իսկ նրա երկում եղած տարբերութիւնները անխուսափելի էին, քանի որ նա օգտուել է նաեւ ուրիշ մատենագիրներից։ (Վերջիններիս երկասիրութիւններին դիմում է նաեւ Խորենացին)։

Եթէ Անանուն ժամանակագրի բանաքաղութիւնն իրօք պատկանէր Խորենացու գրչին եւ գետեղուէր նրա Պատմութեան չորրորդ գրքում, պատմահայրը անխուսափելիօրէն պէտք է կրկնէր իրեն եւ այն էլ պարզունակ, իր կուռ տրամաբանութեանն ու յղացման հետեւողականութեանը անյարիր ձեւով։ Հարկ է ընդգծել, որ Խորենացին խիստ զգուշաւոր է կրկնութիւնների հարցում եւ նոյնիսկ աննշան մեղանչումների դէպքում ջանում է արդարանալ խստապահանջ պատուիրատուի առջեւ, նրանից խնդրում իրեն չմեղադրել աւելորդապատում շարադրանքի համար, եւ աշխատում է հիմնաւորել կրկնութեան անհրաժեշտութիւնը[16]։ Անշուշտ, սա վկայում է, որ կրկնութիւնը Խորենացու մօտ բացառիկ հանգամանք ունի, ուստի նա ջանում է այդ մասին անպայման յիշեցնել իր մեկենասին։ Ասուածից հետեւում է, որ պատմահայրը չէր կարող իր Պատմութեան երեք գրքերին կցել մի նոր՝ չորրորդ գիրք, որը լայն չափերով պէտք է կրկնէր նախորդ գրքերում արդէն ասուածը։ Եւ որովհետեւ Անանունի ժամանակագրութիւնը բանաքաղուած է նաեւ Խորենացու Պատմութեան երեք գրքերից, ուստի ստացւում է, որ պատմահայրը բանաքաղել է··· իր երկասիրած Պատմութիւնից։

Հանճարեղ մտածողը, որի քննական հզօր ուժը, մտքերի կուռ տրամաբանութիւնը նրան դարձրել են առաջին հեղինակութիւնը հայ մտաշխարհում, չէր դիմի նման անհեթեթութեան։ Նիւթի ընտրութեան մէջ յուժ խստապահանջ պատմահայրը նոյնիսկ, չնայած իր պատուիրատուի պահանջին՝ գրել պարսից առասպելների մասին, հայոց պետականութեան փառահեղ ժամանակները վեր հանող իր Պատմութեան մէջ չի կամեցել

գովաբանել այն երկրին հոգեւոր անցեալն ու ներկան, որը վերացրել էր հայոց թագաւորութիւնը եւ Հայաստանը վեր էր ածել իր մարզերից մէկի։ Ուստի, ընդառաջելով իր մեկենասին, Խորենացին պարսից առասպելների մասին պատմող գլուխը դարձրել է յաւելեալ՝ զետեղելով իր երկի առաջին գրքից յետոյ, որպէս առանձին հատուած, քանի որ, ինչպէս ինքն է գրում՝ «... Այլ ծանի՛ր զատելութիւն մեր առ այսպիսի բան, զի ոչ յառաջինն մեր ասացեալ գիրս, եւ ոչ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել, այլ զատ եւ ուրիշ»[17]։ Բայց եւ այնպէս, այն մոցուել է Պատմութեան մէջ։

Այս առընչութեամբ ընթերցողի առջեւ օրինական հարց է ծառանում, թէ ինչու է այդ հատուածը տեղ գտել նրա Պատմութեան մէջ, մինչդեռ նոյն այդ գործի չորրորդ հատորը դուրս է թողնուել նրանից։ Մաթեւոսեանը գտնում է, որ թէեւ Խորենացու Պատմութիւնից, որպէս մի ամբողջութիւնից, նրա չորրորդ գիրքը դուրս է մնացել, բայց նրա նիւթը վերաբերում է նախորդ երեք գրքերին, որոնք հեղինակը կազմել է տուել միասին, մինչդեռ, չորրորդ գիրքը զետեղել է տուել առանձին կազմի մէջ, ինչպէս Հին եւ Նոր Կտակարանները[18]։ Բայց չէ՞ որ Հին եւ Նոր Կտակարանները հեղինակել են տարբեր գրողներ, տարբեր ժամանակներում, իսկ Պատմութիւնը մէկ մատենագրի գործ է, որը պահպանուել է թէ առանձին գրքով եւ թէ այլ մատեանների հետ միեւնոյն կազմի մէջ։ Նրա չորրորդ գիրքը երկու դէպքում էլ տեղ չի գտել այդ մատեաններում, մինչդեռ բնական կը լինէր, որ այն կազմէր Պատմութեան շարունակութիւնը, նրա, որպէս մի ամբողջութեան մի մասը, եթէ այն խոստացուել էր նոյն երկասիրութեան մէջ։

Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի գոյութեան ապացոյց չի կարող լինել նաեւ այն փաստը, որ պատմագիրը խոստանում է մարդկութեան արմատների, առաջին նահապետների մասին պատմող հնադարեան մատենագիրներ Բերոսոսի, Ալեքսանդր Բազմավէպի, Աբիւդենոսի տեղեկութիւնները բերել այլ տեղում եւ ուրիշ ժամանակ՝ «վասն երկարութեան առաջիկայ գործոյս»[19]։ Մաթեւոսեանի կարծիքով, Խորենացին օգտուել է նշուած հեղինակներից, որոնց երկերի շարադրանքը պէտք է իբր թէ փնտռել Պատմութեան երեք գրքերից դուրս, նրա չորրորդ գրքում[20]։ Բայց եթէ վերջինս «չորրորդ գիրքն է», ուրեմն այն հարկ է որ լինի առաջին երեք գրքերի շարունակութիւնը։ Պատմագրի «այլ տեղում» արտայայտութիւնը պէտք է հասկանալ այլ աշխատութեան մէջ, քանի որ նա իր այդ խոստումից անմիջապէս յետոյ պատմում է մարդկութեան նախահայրերի մասին, ջանալով իւրովի մեկնաբանել սուրբգրական տեղեկութիւններն այդ մասին, որից յետոյ նշում է՝ «վասն գիտելոյ քեզ զամենայն, որ ինչ ի լրոյ եւ որ ինչ ի գրոց՝ անցանեմ ընդ բնաւն ի գիրս յայսոսիկ»[21]։ Ուրեմն մատենագիրը Պատմութեան առաջին գրքում

գետեղել է մարդկութեան արմատների մասին բոլոր այն տուեալները, որոնք լսել կամ ընթերցել է ուրիշ հեղինակների մօտ։ Եւ դա բնական էր, քանի որ մարդկութեան ծագման մասին նա պէտք է գրէր հենց այդտեղ եւ ոչ թէ հնարածոյ չորրորդ գրքում։ Սակայն այս մատենագիրների երկերից Խորենացին չի օգտուել, այլ դրանցից մնացած հատուկտորները վերցրել է Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոն (Ժամանակագրութիւն) երկի առաջին մասից, «որովհետեւ,— ինչպէս նկատում է Մ. Աբեղեանը,— ինչ որ նա բերում է՝ կայ այս գրքի մէջ»[22]։ Իր միտքը հիմնաւորելու համար Մաթեւոսեանը վկայաբերում է Արծրունու արդէն նշուած հաղորդումը չորրորդ գրքի մասին, ինչպէս նաեւ Մաշտոցի անուան Մատենադարանում 2679 թուակիր ձեռագրում եղած նիւթերը, որոնք սակայն նոյնպէս առկայ են Եւսեբիոս Կեսարացու երկում, հետեւաբար, այնտեղից (եւ ոչ թէ այլ աղբիւրներից) են մուծուել Անանունի ժամանակագրութեան մէջ։

Հարկ է նշել, նաեւ, որ Արծրունին (որն ինչպէս տեսանք, վկայաբերւում է նաեւ այս առնչութեամբ) բոլորովին չի յիշում, թէ Խորենացու Պատմութեան չորրորդ գրքում խօսւում է մարդկութեան արմատների, առաջին նախահայրերի մասին։ Մի դէպքում Արծրունին նշում է, որ Խորենացին խօսել է Ասորեստանի թագաւորների (որոնց նա համարում է իր հարազատ տոհմի՝ Արծրունիների նախնիներ) մասին, մէկ այլ առիթով պատմիչը գրում է, որ Խորենացու Պատմութեան «խոստացուած» չորրորդ գրքում ասուած է, որ Սահակ Պարթեւը ապրել է մինչեւ խորին ծերութիւն։

Իրօք, Խորենացին Ասորեստանի թագաւորների մասին պատմում է իր երկասիրութեան առաջին գրքում, իսկ Սահակ Պարթեւի մասին՝ նոյն մատեանի երրորդ գրքում՝ բաւարար չափով (եթէ ելնենք այդ աշխատութեան ծաւալից եւ ընդհանուր չափանիշերից)։ Այնպէս որ նրանց մասին պատմագիրը բոլորովին էլ հարկ չէր համարի վերստին անդրադառնալ եւ այն էլ նոյն գործի չորրորդ գրքում։ Ուստի, ճիշդ կը լինէր Արծրունու մօտ Խորենացու Պատմութեան «չորրորդ գիրք» արտայայտութիւնը սրբագրել եւ դիտել որպէս յետնագոյն գրիչների բնագրային մեղանչում եւ այդպիսով բացառել ճշմարտութիւնը թիւրելու որեւէ հնարաւորութիւն։

Շարունակելով չորրորդ գրքի գոյութեան վերաբերեալ փաստարկումները, Մաթեւոսեանը ջանում է տարբերութիւններ գտնել 2679 ձեռագրի բովանդակութեան եւ Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի մէջ (որից, ինչպէս տեսանք, բանաքաղուած է վերոնշեալ ժամանակագրութիւնը), այդ տարբերութիւնները դիտելով որպէս Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի բաղադրամասեր։ Այսպէս, նա նշում է որ 2679 ձեռագրի «Հոգւովն Աստուծոյ Մովսէս պատմէ» դարձուածը բացակա-

յում է Եւսեբիոսի Քրոնիկոնում, ուստի «կասկած չի մնում, որ սոյն եզրակացութիւնը Մովսէս Խորենացունն է»[23]։ Բայց այդ դարձուածը Խորենացու «եզրակացութիւնը» չէ, այլ վերցուած է Աստուածաշնչից, ուր քանիցս շեշտւում է, որ Մովսէս Մարգարէն խօսել է Սուրբ հոգու [հետ], Աստծու միջոցով, ուստի բնականաբար Եւսեբիոսն այն կարող էր մէջբերել։ Բացի այդ, պէտք է նկատի առնել նաեւ այն պարագան, որ Եւսեբիոսի Քրոնիկոնի սոսկ հայերէն թարգմանութեամբ պահպանուած բնագրի առաջին մասը կիսատ է, ուստի վերոնշեալ հատուածը, որ առընչւում է մարդկութեան վաղնջական անցեալին՝ աշխարհի եւ մարդկութեան արարչագործութեանը, կարող էր տեղ գտնել Քրոնիկոնի սկզբի պակասող մասում, քանի որ հենց այդտեղ պէտք է հեղինակը շօշափէր այդ խնդիրները։ Բացի այդ, 2679 թուակիր ձեռագրի բանաքաղ հեղինակը, ինչպէս բնական էր սպասել, պէտք է օգտուէր նաեւ ուրիշ սկզբնաղբիւրներից, քանի որ այդպիսին էր նրա երկասիրած գործի բնոյթը. այն, ինչպէս վերը նշուեց, քաղուած է տարբեր հեղինակների գործերից։

Մաթեւոսեանը ջանում է Արծրունուց եւս բերել այնպիսի վկայութիւններ, որոնք թէեւ պատմիչը վերագրում է Խորենացուն, բայց քանի որ դրանք չկան պատմահօր Պատմութեան երեք գրքերում, ուստի պէտք է տեղ գտնէին չորրորդ գրքում[24]։ Բայց Արծրունու կողմից Խորենացու Պատմութեան չորրորդ գրքին վերագրած տեղեկութիւնները Ասորեստանի Նինոս, Շամիրամ թագաւորների, եգիպտացիների (Խորենացու մօտ՝ Մեծրաիմ) եւ Աբրահամ Նահապետի մասին առկայ են Խորենացու Պատմութեան առաջին գրքի Ե., ԺԵ. գլուխներում։ Էլ ինչո՞ւ պատմիչը պէտք է այդ մասին գրէր նոյն գործի կարծեցեալ չորրորդ գրքում։ Ուստի յանգում ենք այն մտքին, որ Արծրունու «չորրորդ դպրութիւն» դարձուածը նախապէս եղել է «առաջին դպրութիւն» ձեւով։

Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի վարկածը հիմնաւորելուն նախանձախնդիր լինելով, յարգոյ հեղինակը առաջադրում է նորանոր կռուաններ։ Այսպէս, նա համոզուած է, որ Խորենացին մարդկութեան ծագման մասին գրելիս օգտուել է հնադարի մատենագիրներից, որոնց տեղեկութիւններն իբր թէ տարբերւում են Ս. Գրքից։ Դրան որպէս ապացոյց նա բերում է նոյն՝ 2679 ձեռագրի սկզբում զետեղուած Անդրէասի Ժամանակագրութիւնը[25]։ Սակայն այդ Ժամանակագրութիւնը Գ. դարի աստուածաբան Հիպպոլիտի Ազգահամարք երից որդոցն Նոյի գիրքն է, որի աղբիւրը դարձեալ Աստուածաշունչն է։ Հիպպոլիտին կրկնել է Անդրէասը, որը օգտուել է նաեւ Խորենացուց։ Բնական է, որ իւրաքանչիւր մատենագիր իր անհատականութեան կնիքն էր թողնում աստուածաշնչեան հենքի վրայ շարադրուած պատմութեան վրայ, իւրովի մեկնելով այն։ Ուստի նրանց պատումները նոյն անցքերի, անձնաւորութիւն-

ների մասին հարկ է որ ունենային տարբերութիւններ, թէեւ հիմնական բովանդակութեամբ համընկնում էին։ Եթէ, ինչպէս հեղինակն է կարծում, ընդունենք, որ Անդրէասի Ժամանակագրութիւնը իրօք Խորենացին է կազմել, ապա կը ստացուի, որ նոյն խնդիրների մասին պատմահայրը գրել է երկու անգամ, մոռանալով, որ դա արդէն արել է Պատմութեան առաջին գրքում, որի այլափոխուած շարադրանքն է վերը նշուած Ժամանակագրութեան առաջին մասը։ Եւ դա բնական էր, քանի որ այն կազմողը Խորենացին չէր, այլ ուրիշ մատենագիր, որը ապրել է պատմահայրից երկու դար յետոյ, անցքերի շարադրանքը, ինչպէս նշուեց, հասցնելով 685թ., եւ հենց ինքն էլ գրում է, որ օգտուել է Խորենացուց, ուստի ոչ մի հիմք չունենք նրա շարադրածը պատմահօրը վերագրելու։ Եւ եթէ երկու մատենագիրների գործերում եղած որոշ տեղեկութիւններ տարամիտւում են, եւ նշուած Ժամանակագրութեան մէջ տեղ են գտել այնպիսի տուեալներ, որոնք Խորենացու Պատմութեան մէջ չկան, բայց կրում են նրա անունը, ապա դա հետեւանք է այն փաստի, որ դրանք, ինչպէս հենց ինքը՝ Ժամանակագրութեան կազմողն է նշում, վերցուած են Անդրէասից։

Բայց քանի որ այդ տուեալները համընկնում են Խորենացու Պատմութեան առաջին գրքի Ե. գլխում բերուած տեղեկութիւններին, ուստի կրում են նրա, որպէս ճանաչուած եւ յարգուած պատմագրի անունը։ Երկու մատենագիրների գործերում հանդիպող տարբերութիւնները չի կարելի դիտել որպէս Խորենացու Պատմութեան չորրորդ գիրքը կազմող մասեր։ Դրանք հետեւանք են Ժամանակագրութեան Անանուն հեղինակի նաեւ Եւսեբիոսի Քրոնիկոնից օգտուելուն, ուստի նրա տեղեկութիւնները պէտք է տարբերուէին Խորենացու հաղորդածից։ Այլ կերպ եթէ մօտենանք խնդրին, կը ստացուի, որ այն մատենագիրը, որ օգտուել է Խորենացուց, բայց երբեմն շեղուել է նրա հաղորդած նիւթից, օգտուած պէտք է լինէր նրա Պատմութեան չորրորդ գրքից։ Յայտնի է, որ Յովհաննէս Դրասխանակերտցին իր Պատմութեան[26] առաջին մասը գրելիս լայնօրէն կրկնել է Խորենացուն, երբեմն, ի հարկէ, շեղուելով նրանից։ Սակայն մենք չենք կարող այդ շեղումները գիտութեանը հրամցնել որպէս Խորենացու երկի չորրորդ գրքի մասեր։

Մաթեւոսեանը այնքան է համոզուած իր առաջադրած վարկածի հիմնաւոր լինելու մէջ, որ նոյնիսկ կարծում է, թէ Անդրէասի վերոնշեալ երկը Խորենացին թարգմանել է յունարէնից եւ մտցրել է իր Պատմութեան չորրորդ գրքի մէջ։ Բայց այդ դէպքում պատմահայրը, որ աչքի է ընկնում գիտական ծայրայեղ բարեխղճութեամբ, չէր սեփականի ուրիշի արածը եւ այն կը ներկայացնէր հեղինակի անունով։

Խորենացու Պատմութեան չորրորդ գիրք կոչուածը, պարզւում է,

աւելի տարողունակ է, քան կարելի էր ենթադրել։ Մաթեւոսեանը կարծում է, թէ չորրորդ գրքին մաս է կազմել նաեւ Է. դարի հայոց Աշխարհացոյցը[27], որը, ինչպէս յայտնի է, մեզ է հասել միայն Շիրակացու խմբագրութեամբ։ Փաստօրէն հեղինակը Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի մէջ է մուծում ոչ միայն պատմահօր «խոստացած», այլեւ չխոստացած միաւորներ։ Դրանցից է նաեւ Եպիփան Կիպրացու (310–404), Կարգաւորութիւն թարգմանչացն երկը, որը Ե. դարում թարգմանուել է հայերէնի։ Նկատենք, որ Խորենացին իր Պատմութեան առաջին գրքի Զ. գլխում բերում է նաեւ հատուածներ Եպիփանի Գիրք հերձուածոց գրքից, որպէսզի Տիտանի (Քամի) եւ Զրուանի (Սէմի) մասին եղած պատումները լծորդի հայոց նախնական պատմութեան, նոյնիսկ Սիմ լերան (Հայկական Տաւրոսի միջին մասը), Տարօն, Զարուանդ գաւառների անունների ծագման հետ[28]։ Մաթեւոսեանը Եպիփան Կիպրացու Կարգաւորութիւնը Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի մաս կազմելու իր առաջադրած վարկածը փորձում է հիմնաւորել նրանով, որ Վարդան Արեւելցին իր Սաղմոսաց մեկնութիւն[29] գործում եւ իր խմբագրած Տօնապատմառ ծիսական ժողովածուի մէջ օգտագործել է Եպիփանի յիշեալ երկը, բայց ոչ թէ բնագրից, այլ Խորենացու Պատմութեան չորրորդ գրքից։ Բայց եթէ Եպիփանի երկը թարգմանուած էր հայերէնի, ինչո՞ւ Արեւելցին չպէտք է օգտուէր նրանից։ Բացի այդ, եթէ Կիպրացու երկը, որ հայոց պատմութեանը գրեթէ չի առընչւում, ինչո՞ւ պէտք է մտնէր Խորենացու Պատմութեան մէջ։ Այդ դէպքում հարկ կը լինէր վերջինս կոչել նաեւ այլ վերտառութեամբ։ Իր առաջադրած վարկածի հիմնաւորման համար հեղինակը բերում է այն փաստը, որ յիշեալ՝ 2679 ձեռագրում նշուած է նաեւ Եպիփան Կիպրացու անունը, ուստի անվերապահօրէն նրա երկը նոյնպէս մտցնում է Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի մէջ[30]։

Ստացւում է, որ բոլոր այն հեղինակների երկերը, որոնցից օգտուել է Է. դարի Ժամանակագրութեան բանաքաղողը, պէտք է մաս կազմէին Խորենացու Պատմութեան չորրորդ գրքին։ Նոյն բանաքաղ հեղինակն, ինչպէս նշուեց, օգտուել է նաեւ Խորենացու Պատմութիւնից։ Ստացւում է, որ պատմահայրը չորրորդ գրքում պէտք է զետեղէր իր երկասիրութեան երեք գրքերի մէջ ներառուած նիւթը, իմա՝ օգտուէր արդէն իր իսկ հեղինակածից, կրկնէր իրեն։

Յայտնի է, որ Շիրակացին նոյնպէս օգտուել է Խորենացուց։ Սակայն նրա երկերում որեւէ հետք չկայ, որը թոյլ կը տար կռահելու, որ նա ծանօթ է եղել պատմահօր երկասիրութեան չորրորդ գրքին, կամ օգտուել է դրանից։ Մինչդեռ Մաթեւոսեանը կարծում է, որ այն ամէնը, ինչ առկայ է Շիրակացու Քննիկոնում (եւ այն էլ նրա «Երկրաչափու-

թիւն», բաժնում), բայց բացակայում է Խորենացու Պատմութեան երեք գրքերում, պէտք է լինէր նոյնի չորրորդ գրքում[31]։ Բայց մենք ճշմարտութիւնը եղծած կը լինենք, եթէ կարծենք, թէ Շիրակացին օգտուել է միայն Խորենացուց, քանի որ վաղուց յայտնի է, որ նա օգտագործել է այլեւայլ աղբիւրներ։ Համոզիչ չէ նաեւ հեղինակի այն պնդումը, թէ քանի որ Ուխտանէս Պատմիչը իր երկասիրած գործին[32] մեզ հասած օրինակի սկզբում վկայակոչում է Խորենացուն, ուստի պէտք է օգտուած լինի նրա Պատմութեան չորրորդ գրքից[33], այն դէպքում, երբ Ուխտանեսի՝ խնդրոյ առարկայ վկայաբերումներն առկայ են Խորենացու Պատմութեան առաջին գրքում։

Հնարաւոր չէ հիմնաւորել նաեւ Տրդատ Մեծի մասին պատմող հատուածը Խորենացու չորրորդ գրքի մէջ զետեղելու Մաթեւոսեանի փորձը[34]։ Նրա կարծիքով այդ հատուածը կազմել է Խորենացու Պատմութեան վերջաբանը, որտեղ հեղինակը ողբերգական մեղադրութեամբ շարադրում է իր հաւատամքը հայոց ազգի թշուառութիւնների եւ դրանց վերացման մասին։ Եւ ի հիմնաւորումն իր այս վարկածի, Մաթեւոսեանը վկայաբերում է Արծրունուն, որը իր երկասիրութեան առաջին դպրութեան Ժ. գլխում խօսելով Տրդատ Մեծի մասին, նշում է, որ այդ մասին «ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի եւ քերթողի եւ մերոյ լուսաւորութեանց հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն»[35], իմա՝ Խորենացու Պատմութեան երկրորդ գրքում։ Իրօք, Խորենացու այս անմահ երկի երկրորդ գիրքն աւարտւում է Տրդատ Մեծի ողբերգական վախճանի մասին պատմող ՂԲ. գլխով, որը կրում է «Յաղագս վախճանի Տրդատայ թագաւորի, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն» խորագիրը, ուր հանգամանօրէն վեր են հանւում Տրդատ Գ.-ի եղերամահ լինելու հանգամանքները[36]։ Մինչդեռ Մաթեւոսեանը Արծրունու «ի գլուխ երկրորդի պատմագրութեանն» դարձուածքը մեկնում է «երկրորդ պատմագրութեան վերջում» իմաստով եւ գտնում, որ Վերադարձութիւնն իմա՝ Խորենացու երկի չորրորդ գիրքն, աւարտւում է սոյն հատուածով[37]։ Ստացւում է, որ Խորենացին Պատմութեան երկրորդ գրքի վերջահար գլխում գրել է Տրդատ Մեծի մասին, ապա նոյնը կրկնել է չորրորդ գրքում եւ այն էլ որպէս վերջաբան։ Բայց դա անհարիր է Խորենացու Պատմութեան բուն մտայղացմանը, որը յանգում էր հայոց պետականութեան պատմութիւնը քննաբար վեր հանելու գաղափարին։ Մինչդեռ, Արշակունեաց հայոց թագաւորութիւնը, ինչպէս յայտնի է, չէր աւարտւում Տրդատ Մեծով։ Ինչո՞ւ պատմահայրը, որ իր Պատմութեան երեք գրքերն աւարտում է հայոց Արշակունի թագաւորների եւ Գրիգոր Լուսաւորչի տոհմի հայրապետների բարձումով եւ այդ առթիւ իր երկը եզրափակող

«Ողբ»ով, պէտք է մի նոր ողբ գրէր Տրդատ Մեծի մասին, որի դարակազմիկ ժամանակը պսակուեց քրիստոնէութեան ընդունմամբ եւ հայոց պետականութեան հիմքերի ամրապնդման նորանշան երեւոյթներով, որոնք հիմք տուեցին այդ թագաւորի անուանն աւելացնել «Մեծ» վերադիրը։

Օրինական հարց է ծառանում, թէ այդ ինչպէս է, որ յետագայի հայ մատենագիրները յաճախ վկայաբերում են Խորենացու Պատմութեան երեք գրքերի տեղեկութիւնները, մինչդեռ նրա չորրորդ գրքի մասին ոչ մի խօսք չեն ասում։ Թէեւ հեղինակը փորձում է լուծել նաեւ այս հանգոյցը, գրելով, որ հայ մատենագիրներն օգտուել են Խորենացու չորրորդ գրքից, եւ դրան որպէս ապացոյց բերում է դարձեալ նոյն ձեռագրի (իմա՝ Անանուն մատենագրի կազմած մեզ ծանօթ ժամանակագրութեան) տուեալները եւ դրանք վերագրելով Զ. դ. տոմարագէտ Աթանաս Տարօնացուն, գտնում է, որ իր կողմից Աթանաս Տարօնացուն վերագրուած ժամանակագրութեան այդ մասերը քաղուել են Խորենացու Պատմութեան չորրորդ գրքից[38]։ Սակայն դրանք իրականում բանաքաղուած են Խորենացու պատմագրքի երեք գրքերից, նաեւ՝ Եպիփան Կիպրացուց։

Նկատենք, որ յետագայի հայ պատմագիրները՝ Դրասխանակերտցին, Ուխտանէսը, Սամուէլ Անեցին, Մխիթար Անեցին, Մովսէս Կաղանկատուացին ի թիւս այլ երկերի, օգտուել են նաեւ Է. դարի վերոնշեալ Անանուն ժամանակագրութիւնից, որը եթէ ընդունենք, որ մուծուել է Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի մէջ, ապա կը ստացուի, որ նշուած մատենագիրները օգտուել են չորրորդ գրքից։ Բայց նախ պէտք է ապացուցել չորրորդ գրքի գոյութիւնը, ապա միայն ասել, որ այն աղբիւր է ծառայել նշուած հեղինակների համար։ Նոյնը կարելի է ասել նաեւ ուրիշ մատենագիրների (Ստեփանոս Տարօնացու եւ այլոց) մասին։ Եթէ փնտռենք, կը գտնենք նաեւ այլ հեղինակների, որոնք օգտուել են Անանուն այդ ժամանակագրութիւնից, հետեւաբար, ստիպուած պէտք է ընդունենք որ նրանք նոյնպէս օգտուել են Խորենացու չորրորդ գրքից։

Բայց չորրորդ գրքի տարողունակութիւնը այսքանով չի սահմանափակւում։ Այն ներառում է մատենագրական նորանոր միաւորներ։ Մաթեւոսեանը համոզուած է, որ Խորենացու չորրորդ գրքի մէջ մտել է նաեւ Եւսեբիոս Կեսարացու Եկեղեցական Պատմութեան համառօտ տարբերակը[39]։ Բայց ինչո՞ւ Եւսեբիոսի երկը, որ թարգմանուած էր հայերէնի եւ ծանօթ՝ հայ մատենագիրներին, պէտք է Խորենացին զետեղէր իր Պատմութեան մէջ, որն այդ դէպքում հարկ է որ կրէր ոչ միայն իր, այլեւ հանրահռչակ Եւսեբիոսի անունը։ Աւելին, հեղինակը կարծում է, որ համաձայն Արծրունու վկայութեան, վերը նշուած ժամանակագրու-

թեամբ է սկսւում Խորենացու Պատմութեան «Վերադարձութիւնը»[40]։ Սակայն Արծրունու մօտ նման տեղեկութիւն չկայ։ Պատմիչը միայն նշում է, որ Խորենացին գրել է հայոց մեծերի պատմութիւնը, սկսելով Ադամից մինչեւ Զենոն կայսր[41], իմա՝ 474թ. (այստեղ պատմագիրը հաւանօրէն նկատի ունի Խորենացու Պատմութեան շարադրանքի աւարտման տարեթիւը)։ Բացի այդ, յիշեալ ժամանակագրութիւնը, որ ինչպէս նշեցինք, աւարտւում է 685 թուականով, վերարտադրում է ոչ թէ հայոց մեծերի, այլ հին հրեաների եւ այլ ազգերի մեծերի, պարսից թագաւորների, հռոմէական, բիւզանդական կայսրերի պատմութիւնը։ Նշուած գործի եւ Խորենացու Պատմութեան ժամանակագրական եզրերը համապատասխանեցնելու միտումով՝ Մաթեւոսեանը յիշեալ ժամանակագրութիւնը վերջացնում է Զենոն կայսրով[42], որպէսզի այն համընկնի Արծրունու վերոնշեալ հաղորդմանը։ Սակայն, նոյն այդ ժամանակագրութեան մէջ Զենոնից յետոյ յիշւում են նաեւ ուրիշ եօթ կայսրեր, որոնք յաջորդում են նրան, եւ որոնց մասին բնականաբար Խորենացին չէր գրի, քանի որ դա դուրս էր նրա ապրած ժամանակի եւ հենց նրա մտայղացման շրջանակներից։ Մաթեւոսեանը ժամանակագրութեան վերջում դնում է նաեւ պարսից Պերոզ արքայի անունը եւ նրա մահուամբ (484 թ.) էլ աւարտում է այն, որպէսզի յարմարեցնի Զենոնի ժամանակներին։ Մինչդեռ Պերոզի յաջորդ պարսից վեց թագաւորներ եւս տեղ են գտել նոյն ժամանակագրութեան մէջ։ Հեղինակը Խորենացու չորրորդ գրքի մէջ զետեղելով Եպիփան Կիպրացու Կարգաւորութիւն թարգմանչացն երկը (որը թարգմանութեան արուեստի մասին էր եւ լաւ ծանօթ Ե.—Զ. դարերի հայ մատենագիրներին), ինչպէս նաեւ Եւսեբիոսի եւ ուրիշների գործերը, եզրակացնում է, որ Խորենացու Պատմութիւնը այդ երկերն իր մէջ ընդգրկելով դառնում է տիեզերական, համաշխարհային պատմութիւն[43]։ Սակայն մի՞թէ պատմահայրը, որ — ինչպէս նշեցինք — իր անմահ երկը յղացել է հայոց պետականութեան պատմութիւնը վեր հանելու նպատակադրումով, կը դիմէր նման քայլի, սեփականելով ուրիշ եւ այն էլ հեղինակաւոր եւ հայ մտաշխարհին ծանօթ հեղինակների գործերը։

Մաթեւոսեանը նոյն աշխատութեան վերջում փորձ է անում նաեւ վերականգնել Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի բնագիրը[44], նրա մէջ զետեղելով վերոնշեալ անանուն (Շիրակացուն վերագրուած) ժամանակագրութիւնը (Բան Ա.), Սեբի[45] Եկեղեցական պատմութիւնից առանձին մասեր (Բան Ա., Բան Բ.), Շիրակացուն վերագրուած Է. դ. Աշխարհացոյցը (Բան Դ.) ամբողջութեամբ եւ նոյնի «Մղոնաչափք» գործը, Եպիփան Կիպրացու նշուած երկասիրութեան որոշ մասը (Բան Ե.) եւ վերջում՝ Տրդատ Մեծի մասին վերը յիշուած հատուածը (Բան Զ.)։

Սակայն «վերականգնուած» չորրորդ գրքի բնագրի մէջ մտած

գործերը վաղուց հրատարակուել են որպէս առանձին հեղինակների երկեր։

Մաթեւոսեանը տքնաջան, բայց սիզիփեան աշխատանք է կատարել։ Խորենացու անմահ Պատմութեան չորրորդ գրքի մասին վարկածը մերժելի է եւ հերքւում է քննական բանասիրութեան կողմից[46]։

Խորենացու Պատմութիւնը սերնդէ–սերունդ փոխանցուել է իբրեւ յաւէտ անմար եւ թանկ աւանդ, ծառայել որպէս դասագիրք, եղել է հայ մտաւորականութեան ուշադրութեան կիզակէտում։ Հենց դրա շնորհիւ այն մեզ է հասել ամբողջական ու անխաթար վիճակում՝ բազմաթիւ օրինակներով, ինչը բացառում է Խորենացու երկասիրութեանը մի նոր, բնաւ գոյութիւն չունեցած գրքի պատուաստումը։

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ


1. Թովմա Արծրունի եւ Անանուն, ***Պատմութիւն տանն Արծրունեաց***, բնագիրը հրատարակութեան պատրաստեց, աշխարհաբար թարգմ. եւ ծանօթագրութիւնները Վ. Մ. Վարդանեանի, Երեւան, 1985։
2. ***Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց***, աշխ. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913։
3. Արտաշէս Մաթեւոսեան, ***Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» չորրորդ գիրքը***, Երեւան, 1995։
4. Արծրունի, էջ 18։
5. ***Նոյն***, էջ 122։ Գալուստ Տէր Մկրտչեանը եւ Ստեփանոս Մալխասեանը, յենուելով Արծրունու ***Պատմութեան*** տպագիր բնագրերում եղած «ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին» դարձուածի վրայ, առաջարկում են Թովմայի «ի չորրորդ դրուագի» արտայայտութիւնը ուղղել «ի յերրորդ դրուագի» ձեւով (տես՝ Գ. Տէր Մկրտչեան, ***Հայագիտական ուսումնասիրութիւններ***, Ա., Երեւան, 1979, էջ 43–54, Ստ. Մալխասեան, ***Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւն***, աշխարհաբար թարգմ., Երեւան, 1940, առաջաբանը, էջ xxx)։ Արծրունու երկասիրութեան ձեռագիր բնագրի վրայ մեր աշխատելու ընթացքում պարզուեց, որ այնտեղ առկայ է ոչ թէ «երկեցունց», այլ «երեցունց» ընթերցուածը, որին իբր աւելացուել է Խորենացու ***Պատմութեան*** չորրորդ գիրքը։ Բայց սա եւս չի կարող կռուան ծառայել Խորենացու երկի ցարդ յայտնի երեք գրքերին հնարածոյ մի չորրորդ գիրք աւելացնելու համար, քանի որ ինչ որ Արծրունին վերագրում է կարծեցեալ չորրորդ գրքին, տեղ է գտել Խորենացու ***Պատմութեան*** երեք գրքերում։
6. Մաթեւոսեան, էջ 10։
7. Կորիւն, ***Վարք Մաշտոցի***, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 87–88։
8. Արծրունի, էջ 122։
9. Մաթեւոսեան, էջ 25–26։
10. Արծրունի, էջ 122։
11. Խորենացի, էջ 14։
12. ***Նոյն***, էջ 355–356։
13. Աշոտ Աբրահամեան, ***Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը***, Երեւան, 1944

թ., էջ 357–399:
14. Մաթեւոսեան, էջ 35–36:
15. Յակոբ Անասեան, ***Հայկական մատենագիտութիւն***, Ա., Երեւան, 1959, էջ 854–855:
16. Խորենացի, էջ 205:
17. ***Նոյն***, էջ 90–92:
18. Մաթեւոսեան, էջ 41–52:
19. Խորենացի, էջ 13–14:
20. Մաթեւոսեան, էջ 44:
21. Խորենացի, էջ 27:
22. Մանուկ Աբեղեան, ***Երկեր***, Գ. Երեւան, 1968, էջ 291–292:
23. Մաթեւոսեան, էջ 50:
24. ***Նոյն***, էջ 51:
25. ***Նոյն***, էջ 61–62:
26. Յովհաննէս Դրասխանակերտցի Կաթողիկոս, ***Պատմութիւն Հայոց***, Թիֆլիս, 1912: Այս մասին աւելի մանրամասն տես՝ Ա. Բ. Սարգսեան, ***Յովհաննէս Դրասխանակերտցու «Հայոց Պատմութիւնը» եւ Մովսէս Խորենացին***, Երեւան, 1991:
27. Մաթեւոսեան, էջ 74:
28. Խորենացի, էջ 23–26:
29. Վարդան Արեւելցի, ***Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի***, Աստրախան, 1797:
30. Մաթեւոսեան, էջ 85:
31. Մաթեւոսեան, էջ 162–177:
32. Ուխտանէս, ***Պատմութիւն հայոց***, Վաղարշապատ, 1871:
33. ***Նոյն***, էջ 95–96:
34. Այս հատուածը յայտնաբերել եւ 1851ին ***Բազմավէպ***ում հրապարակել է Հայր Ղեւոնդ Վրդ. Ալիշանը:
35. Արծրունի, էջ 96:
36. Խորենացի, էջ 245–250:
37. Մաթեւոսեան, էջ 86:
38. ***Նոյն***, էջ 91–92:
39. ***Նոյն***, էջ 99:
40. Նոյն տեղում:
41. Արծրունի, էջ 122:
42. Մաթեւոսեան, էջ 99:
43. ***Նոյն***, էջ 101:
44. ***Նոյն***, էջ 124–183:
45. Եւսեբիոս Կեսարացու:
46. Այս մասին տես ***Աշխատանքի*** Ա. գրքում, Երեւան, 1995, հրապարակուած Արտաշէս Մարտիրոսեանի, «Մովսէս Խորենացու Պատմութեան չորրորդ գրքի խնդիրը եւ նրա վերարժարժումը բանասիրութեան մէջ» յօդուածը, որտեղ հեղինակը հանգամանալից վերլուծութեամբ հերքում է ***Պատմա-բանասիրական հանդէսի*** 1991թ. 2րդ համարում (էջ 186–204) տպագրուած՝ Մաթեւոսեանի «Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան չորրորդ գրքի հարցը» յօդուածում առաջադրուած վարկածը՝ չորրորդ գրքի գոյութեան մասին: Մարտիրոսեանը չի անդրադարձել Մաթեւոսեանի ***Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» չորրորդ գիրքը*** աշխատութեանը, քանի որ այն լոյս է ընծայուել ***Աշխատանքի*** յիշեալ համարի հրատարակումից փոքրինչ յետոյ: